# ԽՈՐԱՆ ԼՈՒՍՈՅ



# ՇԱՐԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ
ԱՐԱՐԱՏԵԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ

# ԽՈՐԱՆ ԼՈՒՍՈՅ

# ՇԱՐԱԿԱՆ

ԵՐԵՒԱՆ - 1991

Ի Հայրապետութեան
Տ.Տ. Վազգէն Ա
Ամենայն Հայոց Կաթողիկոսի

Հրամանաւ
Տ. Գարեգին Եպիսկոպոս Ներսիսեանի
Առաջնորդական Փոխանորդ
Արարատեան Հայրապետական Թեմի



Ն.Ս.Օ. Տ.Տ. ՎԱԶԳԷՆ Ա
Վեհափառ եւ Սրբազնագոյն
Կաթողիկոս Ամենայն Հայոց

«Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ, Տէր,
Զգործս ձեռաց մերոց աջողեա մեզ»



Սիրելի զավակներ
Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո.

Արարատյան Հայրապետական թեմը ձեռնարկել է «ԽՈՐԱՆ ԼՈՒՍՈՅ» մատենաշարի հրատարակությունը, որով պարբերաբար ձեզ կներկայացվեն Հայ Առաքելական Եկեղեցու սրբազան շարականներն ու աղոթքները, ինչպես նաեւ՝ նմուշներ մեր սուրբ նախնեաց հոգեշեն գրվածքներից:

Անտարակույս, հավատքով կերտված եւ դարերի բովում թրծված հոգեզմայլ այս քերթվածքները, որպես ցանկալի հոգեւոր սնունդ, հավատավոր ժողովրդի քաղցյալ եւ պապակ հոգիներին պիտի պարգեւեն ուրախություն անանձնական եւ լուսավորեն անցողիկ ու հոգեմաշ դժվարությունների միջով դեպի կյանք ու հավիտենություն ձգվող մեր ճանապարհը:

Այսօր, սիրելի զավակներ մեր եկեղեցվո, որպես բարի ավետիս, ձեր սեղանին է դրվում շարքի անդրանիկ գրքույկը՝ «ՇԱՐԱԿԱՆ» խորագրով:

Ձեր սրտի մոտ, ձեր հոգու մեջ պահեք այն, զի լույս է այն եւ հույս, ոգի է եւ ուժ՝ մաքառումի, արիության ու հաղթանակի:

«Որ ուսուցանէ զորդին՝ նախանձեցուցանէ զթշնամին, եւ առաջի բարեկամաց ի նա պարծեսցի» (Սիրաք Լ:3):

Գարեգին Եպիսկոպոս Ներսիսյան



Երեւանի Առաջնորդանիստ Սբ. Սարգիս եկեղեցի

# ՀԱՐԱԿԱՆ

1. Տէրունական աղօթք .............. 9
2. Օրհներգ Հայրապետական...... 10
3. Հրաշափառ ......................... 12
4. Հանգանակ հաւատոյ ........... 14
5. Էջ միածինն ի Հօրէ ............ 18
6. Փառք ի բարձունս .............. 20
7. Այսօր յարեաւ ..................... 25
8. Քրիստոս յարեաւ ................ 26
9. Գովեա Երուսաղէմ ............. 27
10. Խորհուրդ մեծ ................... 28
11. Սուրբ Աստուած ................. 30
12. Ուրախ լեր ........................ 32
13. Առաւօտ լուսոյ .................. 34
14. Աշխարհ ամենայն .............. 36
15. Առաքելոյ աղաւնոյ ............. 38
16. Որք զարդարեցին ............... 41
17. Նորահրաշ ........................ 42
18. Անձինք նուիրեալք............... 45
19. Նոր Սիոն .......................... 46
20. Նորաստեղծեալ .....................48
21. Սուրբ ես Տէր ........................50
22. Նայեաց սիրով ......................52
23. Ի քէն հայցեմք .....................56
24. Տէր, ողորմեա........................ 61
25. Որ յանէից ............................62
26. Գթա Տէր ..............................64
27. Քահանայք ............................67
28. Ի վերինն Երուսաղէմ ..........68



Սբ.Էջմիածին: Միւն խաչքարերի: 14 դ.:



Վ Սուրէնեանց: Գեթսեմանիի աղօթքը: 1900թ.:

# ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ




*Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո.*
*Եկեսցէ արքայութիւն Քո,*
*Եղիցին կամք Քո որպէս յերկինս եւ յերկրի։*
*Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր,*
*Եւ թող մեզ զպարտիս մեր,*
*Որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց,*
*Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէ.*
*Զի Քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս.*
*Ամէն։*

# ՕՐՀՆԵՐԳ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ




Ամեն Հայի սրտից բխած,
Լսիր այս ձայնն, ո՜վ Աստուած.

Երկար կեանք տուր Հայրապետին,
Երկար օրեր Հայոց Հօր.

Տէ՜ր, անսասան պահիր դու միշտ,
Քո իսկ հիմնած Մայր Աթոռ։



Մայր Տաճար Ս. Էջմիածին

# ՀՐԱՇԱՓԱՌ



Հրա շա-փա - -ռ Աս-տը-ուած եւ միշտ բա - - - րե- խնա-մօ - - ղ.
որ յա- ռա - - չ գի -տու-թեամբ ըզ-փըր-կու-թիւն հա-յաս-տան- եայց
ըս - կըզ - - - - - - - -բնա - ւոր - եալ. ի պար-թե-ւա-կան մե-ղա-պարտ
ազ- գէն լու- սա - ւո - րիչ մե - -զ շնոր-հե- ցե - - ր. վասն ո - րոյ
բա-րե-խօ-սու - թեամբ սո-րա Փըր-կիչ կե - - - - - ցո ըզ - մեզ.
այժմ - - - - - եւ ի քո յա- հա - - ւոր գա - լըս - - - տեա - - նն:
Տա-գա-ւոր եր - - կնա-ւոր, զե-կե-ղե - - ցի Քո ան- շարժ պահ -
- - -եա, եւ զեր-կըր-պա-գուս ա-նուանըդ Քում պահ-եա ի խա-ղա-ղու-թե - - ան:



Անյայտ հայ նկարիչ: Սբ. Գրիգոր Լուսաւորիչ: 18 դարի երկրորդ կէս:

Հրաշափառ
Աստուած եւ միշտ
բարեխնամող. որ
յառաջ գիտութեամբ
զփրկութիւն
հայաստանեայց
սկզբնաւորեալ.
ի պարթեւական
մեղապարտ ազգէն
լուսաւորիչ մեզ
շնորհեցեր.
վասն որոյ
բարեխօսութեամբ
սորա Փրկիչ կեցո
զմեզ. այժմ եւ
ի քո ահաւոր
գալստեանն։

Թագաւոր երկնաւոր,
զեկեղեցի քո
անշարժ պահեա,
եւ զերկրպագուս
անուանդ քում
պահեա ի
խաղաղութեան։

# ՀԱՆԳԱՆԱԿ ՀԱՒԱՏՈՅ




5.
Որ յա-ղա-գըս մեր՝ մարդ-կան, եւ վա-սըն մե-րոյ փըր-կու-թեան
իջ-եալ ի յերկ-նից, մարմ-նա-ցաւ, մար-դա-ցաւ, ծը-նաւ կա-տա-րե-լա
-պէս ի Մա-րիա-մայ սըր-բոյ Կու-սէն Հոգ-ւովն սըր-բով: Ո-րով է-առ
6.
մար-մին, հո-գի՛ եւ միտ, եւ զա-մե-նայն որ ինչ է ի մարդ, ճըշ-մար-տա
-պէս եւ ոչ կարծ-եօք: Զար-չար-եալ, խաչ-եալ, թաղ-եալ, յեր-րորդ ա-ւուր
7.
յա-րու-ցեալ, ել-եալ ի յեր-կի-նըս նո-վին մարմ-նովն, նըս-տաւ ընդ աջ-
-մէ Հօր: Գա-լոց է նո-վին մարմ-նո-վըն եւ փա-ռօք Հօր, ի դա-տել
8.
ըզ-կեն-դա-նիս եւ ըզ-մեռ-եալս, ո-րոյ թա-գա-ւո-րու-թեա-նըն ոչ գոյ


9.
վախ-ճան: Հա-ւա-տամք եւ ի Սուրբ Հո-գին, յա-նե-ղըն եւ ի կա-տար-եալն,
որ խօ-սե-ցաւ յօ-րէ-նըս եւ ի մար-գա-րէս եւ յԱ-ւե-տա-րանս, որ էջն ի
Յոր-դա-նան, քա-րոզ-եաց յա-ռաք-եալսն եւ բը-նա-կե-ցաւ ի սուրբսն:
10.
Հա-ւա-տամք եւ ի մի-մի-այն ընդ-հան-րա-կան եւ ա-ռա-քե-լա-կան
սուրբ ե-կե-ղե-ցի, ի մի մը-կըր-տու-թիւն, յա-պաշ-խա- րու-թիւն, ի քա-
11.
ւու-թիւն եւ ի թո-ղու-թիւն մե-ղաց: Ի յա-րու-թիւն մե-ռե-լոց, ի դա-
տաս-տա-նըն յա-վի-տե-նից հոգ-ւոց եւ մարմ-նոց, յար-քա-յու-թիւ-նըն
երկ-նից, եւ ի կեան-սըն յա-ւի-տե-նա-կանս :

Հաւատամք ի մի Աստուած ի Հայրն ամենակալ, յարարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւութից։

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս՝ յՈրդին Աստուծոյ՝ ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին, այսինքն յէութենէ Հօր։ Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ՝ եւ ոչ արարած։ Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի՝ երեւելիք եւ աներեւոյթք։ Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն Սրբով։ Որով էառ մարմին Հոգի եւ միտ, եւ զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս եւ ոչ կարծեօք։ Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն, նստաւ ընդ աջմէ Հօր։ Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր, ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։

Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին, յանեղն եւ ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարգարէս եւ յԱւետարանս, որ էջն ի Յորդանան, քարոզեաց յառաքեալսն եւ բնակեցաւ ի սուրբսն։

Հաւատամք եւ ի միմիայն ընդհանրական եւ առաքելական սուրբ եկեղեցի։ Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց։ Ի յարութիւն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց, յարքայութիւնն երկնից, եւ ի կեանսն յաւիտենականս։

# ԷՋ ՄԻԱԾԻՆՆ Ի ՀՕՐԷ





Գ. Խանջեան: Իջման տեսիլքը: 1979թ.:

Էջ միածինն ի Հօրէ եւ լոյս
փառաց ընդ նմա. Ձայնք հնչեցին
սանդարամետք անդնդոց։ Տեսեալ
զլոյս մեծ հայրապետին Գրիգորի,
պատմեր ցնծութեամբ
հաւատացեալ արքային։ Եկայք
շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ,
քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի
Հայաստան աշխարհի։

# ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ



# Փառք ի բարձունս






Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն։ Եւ օրհնութիւն քեզ ի բարձունս, օրհնեալ ես, Տէր Աստուած մեր. օրհնեմք զքեզ եւ գովեմք զքեզ։ Խոստովանիմք, Տէր, զքեզ եւ երկիր պագանեմք քեզ. փառաւորեմք զքեզ, գոհանամք, Տէր, զքէն վասն մեծի փառաց քոց։ Տէր թագաւոր, սուրբդ երկնային, Աստուած եւ Հայր ամենակալ։ Տէր եւ Որդի Հօր միածին՝ Յիսուս Քրիստոս եւ սուրբ Որդի։ Տէր Աստուած, Գառն Աստուծոյ եւ Որդի Հօր, որ առեր զմեղս ի կուսէն։ Ողորմեցար, բարձեր զմեղս աշխարհի. եւ արդ ընկալ զաղաչանս մեր։ Սուրբդ որ նստիս ընդ աջմէ Հօր, ողորմեաց մեզ։ Զի դու

միայն սուրբ, դու միայն բարձրեալ ես, դու միայն՝ Տէր մեր Յիսուս Քրիստոս։ Տէր եւ Հոգիդ սուրբ որ ի փառս Աստուած. ընդ Հօր. ամէն։

Եւ յամենայն ժամ օրհնեմք զքեզ Տէր եւ գովեմք զանուն սուրբ քո յաւիտեան՝ եւ յաւիտեանս յաւիտենից։ Արժանի արա՛ Տէր զօրս զայս խաղաղութեամբ՝ եւ առանց մեղաց պահեա՛ զմեզ։ Օրհնեալ ես, Տէր Աստուած հարցն մերոց. գովեալ եւ փառաւորեալ է անուն սուրբ քո յաւիտեանս. ամէն։

Օրհնեալ Տէր՝ ուսո՛ ինձ զարդարութիւնս քո (Երիցս կրկնել)։ Տէր ապաւէն եղեր մեր յազգէ յազգ։ Ես աղաչեմ, Տէր, ողորմեա՛ ինձ եւ բժշկեա՛ զանձն իմ. ես մեղայ քեզ։ Ցո՛յց մեզ Տէր զողորմութիւնս քո՝ եւ զփրկութիւնս քո տո՛ւր մեզ։ Տէր, ողորմութիւն քո յաւիտեան, զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ։ Տէր իմ զքեզ ապաւէն ինձ արարի. ուսո՛ ինձ առնել զկամս քո. զի դու ես Աստուած իմ։ Ի քէն է, Տէր, աղբիւր կենդանութեան եւ լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս։ Ծագեա՛ զողորմութիւնս քո՝ որք ճանաչեն զքեզ Տէր։



Վ. Սուրէնեանց: Յիսուս: 1900թ.:

# ԱՅՍՕՐ ՅԱՐԵԱՒ




*Այսօր յարեաւ ի մեռելոց փեսայն անմահ եւ երկնաւոր. քեզ աւետիք խնդութեան. հարսն ի յերկրէ եկեղեցի. օրհնեա ի ձայն ցնծութեան. զԱստուած քո Սիոն:*

*Այսօր անճառ լոյսն ի լուսոյ լուսաւորեաց զմանկունս քո. լուսաւորեա Երուսաղէմ. քանզի յարեաւ լոյս քո Քրիստոս. օրհնեա ի:*

*Այսօր խաւարն անգիտութեան հալածեցաւ երրեակ լուսովն. եւ քեզ ծագեաց լոյս գիտութեան. յարուցեալն ի մեռելոց Քրիստոս. օրհնեա ի:*

# ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ

*Քրիստոս յարեաւ*
*ի մեռելոց.*
*մահուամբ զմահ կոխեաց,*
*եւ յարութեամբն իւրով*
*մեզ զկեանս պարգեւեաց.*
*նմա փառք յաւիտեանս*
*ամէն։*



Ցարութիւն: Դրուագ Աւետարանի: 1374թ., Սեպուհ լեռ:



# ԳՈՎԵԱ ԵՐՈՒՍԱՂԷՄ




Գովեա Երուսաղէմ զՏէր: Յարեաւ Քրիստոս ի մեռելոց, ալէլուիա: Եկայք ժողովուրդք. երգեցէք Տեառն՝ ալէլուիա: Յարուցելոյն ի մեռելոց ալէլուիա. որ զաշխարհս լուսաւորեաց՝ ալէլուիա:

# ԽՈՐՀՈՒՐԴ ՄԵԾ



# Խորհուրդ մեծ




Խորհուրդ մեծ եւ սքանչելի որ յայսմ աւուր յայտնեցաւ. հովիւքն երգեն ընդ հրեշտակս տան աւետիս աշխարհի։

Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի. որդիք մարդկան օրհնեցէք. զի վասն մեր մարմնացաւ։



Սր. Էջմիածին: Մայր տաճարի յարդարանքից:

# ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

*Ամէնօրեայ եւ Խաչէ տօներէ*




*ՍԷ. Պատարագէ*



*Զատկի եւ ամէնայն յարութեան Կիւրակէից*
**Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր. սուրբ եւ անմահ, որ յարեարդ ի մեռելոց՝ ողորմեա՛ մեզ** (երգել երեք անգամ)։

*Թովմայի առաքելոյ ասայեալ*
**Փառաւորեալ եւ օրհնեալ միշտ, սուրբ կոյս Աստուածածին Մարիամ, մայր Քրիստոսի, մատո զաղաչանս մեր՝ Որդւոյ քոյ եւ Աստուծոյ մերոյ** (երգել մէկ անգամ)։

*<u>ծանօթութիւն</u>*
*ուղղագիր հատուածը փոփոխւում է ըստ տօների: Տե՛ս համապատասխան տեքստերը ստորեւ:*

*Քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի եւ Տաղկապարդին:*
**... որ եկիր եւ գալոց ես ...**

*Աւագ Ուրբաթու գիշերին*
**... որ մատնեցար վասն մեր ...**

*Ուրբաթու ճաշուն եւ ամենայն սրբոյ. խաչի եւ Եկեղեցւոյ. այլ եւ աւուրց Պահոց*
**... որ խաչեցար վասն մեր ...**

*Աւագ Ուրբաթու երեկոյին եւ Շաբաթու գիշերին*
**... որ թաղեցար վասն մեր ...**

*Աւետման Ծննդեան եւ Թլփատութեան*
**... որ յայտնեցար վասն մեր ...**

*Համբարձմանն Քրիստոսի*
**... որ համբարձար փառօք առ Հայր ...**

*Գալստեան Հոգւոյն Սրբոյ*
**... որ եկիր եւ հանգեար յառաքեալսն ...**

*Վարդավառին*
**... որ յայտնեցար ի Թաբօր լերինն ...**

*Վերափոխման սուրբ Աստուածածնին*
**... որ եկիր ի փոխումն մօր քոյ եւ կուսի ...**

# ՈՒՐԱԽ ԼԵՐ



Ու - րախ լե - ր Սուրբ ե - կե -ղե - ցի. քան- զի Քրիս-
տոս ա - - - ր - -քայն երկ- - նից այ - սօր պը-սա- կեաց ըզ- -
քեզ խա-չիւն իւ- - - - րով. եւ զար-դար- եաց զա - մու-րը -
- ս քո սքան- չե- լի փա - ռօքն իւ - րո - - - - վք:
Խըն- դա յո - -յժ դուս-տըր Սի-ով- - նի.քան-զի եր- կիրս ե- - -ր
կինք ե - ղեն՝ այ - սօր վե-րըս-տին քո նո- - րոգ- - մամբ. եւ
Թա-գա- որ - - րն երկ- - նա - -ւոր հա- - ճե - - - - ցաւ
բը - նա - կիլ ի քե - - - - - - - - զ:



Վ. Սուրէնեանց։ Աստուածամայրը գահի վրայ։ 1900թ

Ուրախ լեր Սուրբ եկեղեցի, քանզի Քրիստոս արքայն երկնից այսօր պսակեաց զքեզ խաչիւն իւրով. եւ զարդարեաց զամուրս քո սքանչելի փառօքն իւրովք։

Խնդա յոյժ դուստր Սիովնի, քանզի երկիրս երկինք եղեն՝ այսօր վերստին քո նորոգմամբ, եւ Թագաւորն երկնաւոր հաճեցաւ բնակիլ ի քեզ։

Ընդ դասս երկնաւոր զօրացն՝ վերառեալ տօնեմք քեզ այսօր զանդադար փառատրութիւնս, ուրախ լեր հարսն անարատ անքննելին քո խորհրդով։

# ԱՌԱՒՕՏ ԼՈՒՍՈՅ




Առաւօտ լուսոյ. արեգակն արդար. առ իս լոյս ծագեա։
Բղխումն ի Հօրէ. բղխեա ի հոգւոյս. բան քեզ ի հաճոյս։

Գանձդ ողորմութեան. գանձիդ ծածկելոյ. գտող զիս արա։
Դուռն ողորմութեան. դաւանողիս բաց. դասեցո վերնոցն։

Երրեակ միութիւն. եղելոց խնամող. եւ ինձ ողորմեա։
Զարթի՛ր, Տէր, յօգնել. զարթո՛ զթմրեալս, զուարթնոց նմանիլ։

Էդ Հայր անսկիզբն. էակից Որդի. է միշտ սուրբ Հոգի։
Ընկալ զիս գթած. ընկալ ողորմած. ընկալ մարդասէր։

Թագաւոր փառաց թողութեանց տուող. թող ինձ զյանցանս։
Ժողովող բարեաց. ժողովեա եւ զիս. ժողովս անդրանկաց։

Ի քէն Տէր հայցեմ. ի մարդասիրէդ. ինձ բժշկութիւն։
Լեր կեանք մեռելոյս. լոյս խաւարելոյս. լուծանող ցաւոյս։

Խորհրդոց գիտող. խաւարիս շնորհեա. խորհուրդ լուսաւոր։
Ծնունդ Հօր ծոցոյ. ծածկելոյս ստուերաւ. ծագեա զլոյս փառաց։

Կենարար Փրկիչ. կեցո զմեռեալս. կանգնեա զգլորեալս։
Հաստեա հաւատով. հաստատեա յուսով. հիմնեցո սիրով։

Զայնիւս աղաչեմ. ձեռօքս պաղատիմ. ձիր բարեաց շնորհեա։
Ղամբարամբ լուսոյ. ղեկավար ճարտար. ղօղեալս ամրացո։

Ճառագայթ փառաց. ճանապարհ ինձ ցոյց, ճեպել ի յերկինս։
Միածինդ Հօր. մոյծ զիս յառագաստ. մաքուր հարսանեացդ։

Յորժամ գաս փառօք. յահագին աւուրն. յիշեա զիս, Քրիստոս։
Նորոգող հնութեանց. նորոգեա եւ զիս. նորոգ զարդարեա։

Շնորհատու բարեաց. շնորհեա զքաւութիւն. շնորհեա զթողու-
թիւն։ Ուրախացո Տէր. ոգւոյս փրկութեամբ. ոյր վասն եմ ի սուգ։

Չար մշակողին. չար սերմանց նորին. չորացո զպտուղ։
Պարգեւիչ բարեաց. պարգեւեա իմոց. պարտեացս թողութիւն։

Ջուր շնորհեա աչացս. ջերմ հեղուլ արտօսր. ջնջել զյանցանս։
Ռետինդ քաղցու. ռամ հոգւոյս արբո. ռահ ցոյց ինձ լուսոյ։

Սէր անուն Յիսուս. սիրով քո ճմլեա. սիրտ իմ քարեղէն։
Վասն գթութեանդ. վասն ողորմութեանդ. վերստին կեցո։

Տենչալւոյդ տեսլեամբ. տուր ինձ յագենալ. Տէր Յիսուս Քրիստոս։
Րաբունդ երկնաւոր. րոտեա զաշակերտս. րամից երկնայնոց։

Ցօղ արեան քո, Տէր. ցողեա ի հոգիս. ցնծասցէ անձն իմ։
Ւիւծեալս մեղօք. ւիւծեալ աղաչեմ. ւիւսեա յիս բարիս։

Փրկիչ բոլորից. փութա զիս փրկել. փորձութեանց մեղաց։
Քաւիչ յանցանաց. քաւեա զօրհնաբանս. քեզ երգել զփառս։

Սուրբ Աստուածածնին բարեխօսութեամբն.
Յիշեա Տէր եւ ողորմեա։

# ԱՇԽԱՐՀ ԱՄԵՆԱՅՆ




Աշխարհ ամենայն՝ առիս նայեցեալ, ախտակից լերուք։ Բանամ զշրթունս, բարբառիմ լեզուաւս, բողոքեմ զանձնէս։
Տէր ողորմեա. Տէր ողորմեա. տէր ողորմեա։

Գող եղէ մեղաց, գտող կորստեան, զուր ինձ փորեցի։ Դաւեցի զանձն իմ, դաւաճանեցի, դարան գործեցի։ Տէր ողորմեա…։

Երբեմն էի լոյս, եւ այժմ եմ խաւար, եւ ստուեր մահու։ Զիարդ պատմեցից. զթիւ մեղաց իմոց, զի բազում են յոյժ։
Տէր ողորմեա…։

Երկինք եւ երկիր, եկայք ողբացէք եղկելի զանձն իմ։ Ընտրեցի զչարն. ընկալայ կամաւ զհոյլս մեղաց։ Տէր ողորմեա…։

Թաթաւիմ տղմով, թաւալիմ ի մեղս, թօթափիլ չկարեմ։ Ծանր ախտիւ լցեալ, ժահահոտ եղէ ժամանակս բազումս։
Տէր ողորմեա…։

Ի բաց մեկնեցայ, ի սուրբ խորհրդոց, ի բարեաց գործոց։ Լաւ վարկաւ անձն իմ, լուսոյն հեռանալ, լինիլ ընդ խաւար։

Տէր ողորմեա...։
Խորհուրդք չարին, խաբեն զհոգիս. խորասոյզ առնեն։ Ծածկեն անդնդօք, ծփծաղին գլորմամբս, ծանակ զիս առնեն։
Տէր ողորմեա...։
Կամաւ կորացայ, կարկամեալ անձամբ, կանգնիլ ոչ կարեմ։ Հուր մեղաց կիզող, հրդեհեաց որ յիս հոգեւոր բարիս։
Տէր ողորմեա...։
Ձաղկեցայ մեղօք, ձաղեցին տեսողքն, ձանձրացաւ հոգիս։ Ղեղի դառնութեան ղօղեալ ի սիրտ իմ, ղամպար իմ շիջաւ։
Տէր ողորմեա...։
Ճաշակմամբ մեղաց, ճաշեցի զմահ. ճոխս աղքատացայ։ Մեռեալ եմ հոգւովս, մոլորեալ մտօքս, միայն կամ մարմնովս։
Տէր ողորմեա...։
Յորոգայթ մահու, յորսողին անկայ. յաղթեցայ յաղտից։ Նետից թշնամւոյն. նշաւակ եղէ, նոր միշտ խոցոտիմ։
Տէր ողորմեա...։
Շուրջ պատեալ զինեւ, շունք բազումք եղեն. շաղախին արեամբս։ Որս եղէ չարին, ուռկանաւ մեղաց. որսացաւ անձն իմ։
Տէր ողորմեա...։
Չարաչար վշտօք, չարչարի անձն իմ. չունիմ դադարումն։ Պարտապան գտայ, պարտուց յանցանաց, պատրեալս ի մեղաց։
Տէր ողորմեա...։
Ջանամ զղջանալ, ջերանիմդարձեալ. ջեռնում հրով մեղաց։ Ռաբբի կոչեցայ, ռակայ անուանիմ. ռամկական վարուքս։
Տէր ողորմեա...։
Սիրով ցանկութեան, սաստիկ բարկութեամբ սիրտ իմ խոցեալ է։ Վիրօք յանցանաց վշտանայ հոգիս. վարանեալ Հրջիմ։
Տէր ողորմեա...։
Տիրեցին ինձ չարք, տարագիր հանին, տիրական գրկացն։ Րաբունւոյն բարւոյ, րախճական ձայնին, րստինս ոչ լուայ։
Տէր ողորմեա...։
Ցանկութիւն չարեաց, ցանկալը դիմօք, ցաւեցոյց զաչս իմ։ Ււրաքանչիւրոց, ւիւսմամբ խուռն ախտից ւիւծեալ է հոգիս։
Տէր ողորմեա...։
Փութացիր անձն իմ, փախչիլ ի չարեաց, փափագիլ բարեաց։ Քեզ միշտ մերձ ծանիր, քուն մահու եկեալ, քննող դատաւորն։
Տէր ողորմեա։ Տէր ողորմեա։
Տէր ողորմեա։
Սուրբ Աստուածածնին բարեխօսութեամբ. Յիշեա Տէր եւ ողորմեա։

# ԱՌԱՔԵԼՈՅ ԱՂԱՒՆՈՅ






Առաքելոյ աղաւնոյ իջանելով մեծաձայն հնչմամբ ի բարձանց, ի նմանութիւն լուսոյ փայլման հրագինեաց անկիզելի զաշակերտսն մինչդեռ նստէին ի սուրբ Վերնատանն:

Աննիւթական աղաւնի, անքննելի որ քննէ զխորս Աստուծոյ, զոր առեալ ի Հօրէ պատմէ զահաւոր եւ զմիւս անգամ գալուստն. զոր քարոզեցին համագոյականն:

Օրհնութիւն ի բարձունս, ելողին ի Հօրէ Հոգւոյն Սրբոյ. որով առաքեալքն արբեցան անմահական բաժակաւն, եւ հրաւիրեցին զերկիրս ի յերկինս:



Գ. Խանջեան: Հայոց այբուբենը (Սբ. Մեսրոպ-Սբ. Սահակ): Գոբելեն: 1980թ.

# ՈՐՔ ԶԱՐԴԱՐԵՑԻՆ




Որք զարդարեցին տնօրինաբար զիմաստս անեղին.
հաստատելով յերկրի զգիր կենդանի հովուել զհօտ նոր Իսրայէլի.
երգով քաղցրութեան հնչմամբ զԱստուած օրհնեսցուք:

Որ զերկրաւոր մեծութեան փառաց խաւար կոչեցին.
ապաւինելով ի յոյս անմահ փեսային՝ անճառ բանին արժանի եղեն. եր:

Որ զօրութեամբ հօր իմաստութեան էին անեղի. հաստատեցին զաթոռ սրբոյն Գրիգորի՝ թարգմանութեամբ նշանագրութեան. եր:

Որ նորափետուր բանիւ զարդարեալ պայծառազգեցան.
եկեղեցիք Հայաստանեայց ի ձեռն սրբոյն Սահակայ. եր:

# ՆՈՐԱՀՐԱՇ




Նորահրաշ պսակաւոր, եւ զօրագլուխ առաքինեաց.
վառեցար զինու հոգւոյն՝ արիաբար ընդդէմ մահու.
Վարդան քաջ նահատակ՝ որ վանեցեր զթշնամին՝.
վարդագոյն արեամբդ քո պսակեցեր զեկեղեցի։
Երկնաւոր Թագաւորին զինու յաղթեալ պատերազմին.
խոհական իմաստութեամբ խոհեմացեալ անճառապէս.
Խորէն խորհրդական եւ ծանուցեալ անուն բարի՝.
խաչելոյն վկայ եղեալ՝ հեղմամբ արեան պսակեցաւ։

Ռենական լուսով լցեալ արփացեալն քաջն Արտակ`. թաթաւեալ ի կարմրութիւն` բոսորային բղխեալ աղբերն`. զփրկականն ըմպեալ զբաժակ` եւ մկրտեալ արեամբն իւրով`. դասակցեալ ընդ անմարմնոցն Երրորդութեան երգել զփառս։

Սրբափայլ զգեստու պճնեալք` ի յերկնաւոր հանդիսադրէն. Երրորդութեամբն զօրացեալ` վանեալ զամուրս բանսարկուին. Հմայեակ հօր. ընծայեալ որդւոյ գոլով չարչարակից`. հոգւովն յաղթեալ պատերազմին եւ չարասէր թագաւորին։

Էական բարւոյն դիտմամբ` ընդդէմ մեղացն վառեցաւ. տարագնաց եկիւք յերկինս պարակցեալ ընդ անմարմնոցն. Տաճատ զարմանալի տաճար եղեալ Երրորդութեանն. տէրուննեան սուրբ խորհրդոյն տուն եւ տեղի արժանացեալ։

Ստացեալ զհաւատոյ` վահան յուսոյն զրահիւք ծածկեալ`. զփրկականն սաղաւարտ` ի գլուխ եդեալ զնշան խաչին. Վահան վեհ ներեւեալն` որ մանկութեամբ նահատակեալ. խաչելոյն վկայ եղեալ` պսակեցաւ արեամբն իւրով։

Ի հոտ անոյշ ողջակիզեալ մատուցանէր զինքն նուէր. բանաւոր պատարագաւ ընծայելով հօր ի յերկինս. արսէնն ցանկալի արդարութեամբն ճոխացեալ. իմաստութեամբ պայծառացեալ յեօթնարփեան շնորհաց հոգւոյն։

Երկոքումբք հարազատովք ընտրելագոյն նահատակօք. յառաջեալ յամենեցունց գլուխ եւ աւարտ մարտիրոսաց. նախաշաւիղ գալով բարեաց յառաջադէմն Գարեգին. ընկալեալ զբրաբիոնն յաղթանակ նահատակացն։

Ռամկական խումբ հազարաց եւ երեսնից թիւ ընդ վեցից` որք ընդ նոսին նահատակեալ. արիաբար պատերազմաւ. եւ հեղին զարիւնս իւրեանց` ի նորոգումն եկեղեցւոյ. ընդ նոսին պսակելով ի յերկնաւոր հանդիսադրէն։

Գոհութեամբ փառատրութիւն` երրորդութեանդ նուագեմք. բազմութեամբ պսակելոցս զմեօք մածեալ առաքինեացս. եկեղեցիք հայաստանեայց պայծառապէս զարդարեցան. ունելով միշտ բարեխօս զճգնութիւն մարտի սոյա։



Գ. Խանջեան: Վարդանանք: Դրուագ գոբլենի: 1983թ.:

# ԱՆՁԻՆՔ ՆՈՒԻՐԵԱԼՔ




Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի. երկնաւոր նահատակք եւ կուսանք իմաստունք. ի պարծանս ձեր բարձրացեալ տօնէ՛. մայր Սիովն դստերօքն իւրովք:
Բարբառք երկնաւորք լցին զերկիր. քանզի հոտ անուշից բուրեցայք ի Քրիստոս. ողջակէզք բանաւորք եւ զոհք փրկութեան. եւ որոջք անարատք ընծայեալք Աստուծոյ:
Գեղեցկութիւնք մարմնաւոր պայծառութեան ձերոյ. յիմարեցոյց զթագաւորն եւ պակեան հեթանոսք. ի գեղ աքանչելի աստուածատուր կուսանացն. տարփացեալ զուարթունքն ընդ մարդկան տօնեցին: Դարձեալ վերստին արարչագործ զօրութիւն. եւ դարձեալ եղեմ աստուածատունկ զարդարի. քանզի ծառն կենաց տնկեցաւ ի դրախտին՛. բերելով մեզ պտուղ զերանելին Հռիփսիմէ:
Երկունք մահաբերք անիծիցն լուծան՛. եւ Ադամ վերստին աստուածակերպ ճոխանայ. փոխանակ Եւայի դստերք նորա. մարտիրոսք եւ կուսանք ընծայեալք Աստուծոյ:
Զօրք հրեշտակաց ընդ մարդկան տօնեցին. եւ կանայք ի յերկինս գրեցան զինուորք. կուսութեամբ ընդ մահու պատերազմեալք յաղթեցին. խաչակից լինելով կուսածին Արարչին:

# ՆՈՐ ՍԻՈՆ




Նոր Սիոն ծնեալ մանկունք սուրբ աւազանաւն. շնորհազարդեալ հոգւովն Աստուծոյ օրհնեցէք. Զհայրն երկնաւոր յաւուր ծննդեան Սրբուհւոյ կուսին. յոր օրհնէցայք յանիծից նախնոյն:



Սբ. Գրիգոր Լուսաւորիչը մկրտում է
Տրդատ Թագաւորին. Սուչավա: 18 դ.:

# ՆՈՐԱՍՏԵՂԾԵԱԼ




Նորաստեղծեալ բանն յանէից, ի սկզբանէ զերկինս երկնից. եւ զերկնային զօրս անմարմնոց իմանալեացն զուարթնոց. եւ զգալի տարերց քառից հակառակաց միաբանից. որով յաւէտ փառաբանի Երրորդութիւնն անճառելի:

Երեքսրբեան մի տէրութիւն միով բնութեամբ աստուածութիւն. լոյսն որ անեղ արարչական ասաց լինել լոյս եղական. զոր եւ ծագեաց յօրն առաջին միաշաբաթ կիւրակէին. որով յաւէտ:

Բարունորէն բացատրեսցուք զծածկեալ խորհուրդն ծանիծուք· զի լոյսն անտես իմանալի մաքուր հոգւոց տեսանելի· ի սոյն ծագեաց միաշաբաթ մեզ յարութեան սուրբ ճառագայթ· եկայք փրկեալք ընդ զուարթնոյն տուք օրհնութիւն յարուցելոյն։

Սէրդ սիրով խոնարհեցար ի փրկութիւն մեր մարմնացար· նովին մարմնովն խաչեցար ի գերեզման մահու եդար· այսօր յարեար աստուածաբար ի հրեշտակաց քարոզեցար· եկայք փր։

Երեւեցար խնկաբերիցն յողջոյն կենացն ուրախալից· եւ ի լերինն Գալիլեայ առաքելոց մետասանից· արժանացո զմեզ ընդ նոսին զքեզ տեսանել յօրն վերջին· եկայք փր։

Սիովնի որդիք զարթիք հարսին լուսոյ տուք աւետիք· եթե փեսայն քո յարուցեալ յաղթեաց մահու իշխանութեամբ· գայ պսակէ զքեզ փառօք եւ ընդ առաջ պճնեալ զարդուք· երգեա երգ նոր յարուցելոյն ննջեցելոց կենաց պտղոյն։

# ՍՈՒՐԲ ԵՍ ՏԷՐ




Սուրբ ես, Տէր զօրութեանց, որ բնակեալդ ես ի յերկինս, եւ բարեբանիս ի սրբոց քոց։

Երկնային զօրութիւնք, Սերովբէք եւ Քերովբէք, անդադար օրհնեն սուրբ զանունդ քո։

Քահանայք, ընդ նոսին պաշտօնեայք եւ ժողովուրդք, երկրպագեսցուք տէրութեանդ քո։

Լոյսդ որ յառաջ քան զյաւիտեանս, ի Հօրէ առաքեցար, եւ լուսով իմանալեաւ լցեր զարարածս. օրհնեալ ես թագաւոր յաւիտենից։

Որ զլոյսն ի սկզբանէ հաստատեցեր վերստին, եւ զխաւարն անգիտութեան յարութեամբդ քո հալածեցեր. օրհ...

Ուստի եւ մեք լուսաւորեալքս ընդ լուսեղէն զուարթնոցն, երգեսցուք ցնծութեամբ ի յարութեան երեկոյիս, օրհնեալ ես Թագաւոր յաւիտենից։

Երկնաքաղաքացին Յովհաննէս, մեծն ի ծնունդս կանանց, քարոզէր յանապատի՝ ազդ-արարող բարբառովն՝ զծագումն լուսոյ արեգականն արդարութեան։

Ճշմարիտ մարգարէ եւ ձեռնադրող Որդւոյն Աստուծոյ, յառաջընթաց կարապետ եւ պատմող աստուածային օրինացն, հորդէր ճանապարհս Թագաւորին յաւիտենից։

Յանօրէն գինարբուսն մոլեգնեալ Հերովդիադայ, ի պարգեւի մասին խնդրէր զգլուխ մարգարէին, շիջուցանել զարուսեակն եւ զանաղօտ լապտերն։

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ։

Սրբուհւոյ Աստուածածնին բարեխօսութեամբ պարգեւեա՛ երկրպագուացս ամենասուրբ Երրորդութեանդ զյարութիւն յուսոյ կենացն յաւիտենից։

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Զհաւատացեալ ժողովուրդս սուրբ Երրորդութեանդ, եւ զապաւինեալս ի խորան փառաց քոց, պահեա՛ անխռով ի խաղաղութեան։

# ՆԱՅԵԱՑ ՍԻՐՈՎ



## Սայեաց սիրով



# Նայեաց սիրով

Նայեաց սիրով, Հայրդ գթած, ի քո ստեղծեալ գործս ձեռաց.
Եւ զբանակս հրեշտակաց տուր պահապան մեզ տկարաց.
Փրկեա զանձինս ի փորձանաց ի խաւարի շրջող դիւաց.
Զի ի տուընջեան եւ գիշերի տացուք քեզ փառս անլռելի։

Բ. Էին անեղ անսկզբան ծնունդ անճառ Որդի եւ Բան.
Որ արարեր զտիւ գործոյ եւ զգիշեր ի հանգիստ քնոյ.
Տուր ի ննջել աչաց մարմնոյ՝ արթուն լինիլ մեզ ըստ հոգւոյ. զի...

Գ. Բարուն հոգւոց բանաւորաց՝ աղբիւր լուսոյ բաշխող շնորհաց.
Ի փակել դրանց բնութեանց մարմնոց՝ լոյս տուր աչաց սրտից
մերոց. Ի գիշերաց առ քեզ կանխել ընդ հրեշտակացն օրհնաբանել.
զի...

Դ. Սուրբդ սրբոց Երրորդութիւն. զմեզ մաքրեա քեզ
բնակութիւն. Շնորհեա ընդ մանկանցն առագաստի՝ հանգչիլ ընդ
քեզ ի յանկողնի. Տուր զհայցուած բարեկամին՝ զփոխ երից
նկանակին. զի...

Ե. Երեւելի լոյս ստեղծեր՝ զտիւ եւ զգիշեր բաժանեցեր.
Ծագեա մեզ Տէր ի գիշերի զճառագայթս իմանալի.
Տուր յամենայն ժամանակի զպահպանող աջ քո հովանի. զի...

Զ. Սիրոյ քո հուր արկեալ յերկիր՝ բորբոքեցի ի հոգիս մեր.
Զխորհուրդ սրտից մեր մաքրեցէ՝ զլոյս գիտութեան քո
փայլեցէ. Ի քնոյ մահու զմեզ զարթուցէ զմիտս բոցով քո
վառեցէ. զի...

Է. Ի քեզ նայիմք լոյսդ անմատոյց՝ ի զգայական ծածկեալ լուսոյ. որ վասն մեր եղար ի գըի՝ եւ ննջեցեր ի տապանի. առ մեզ ննջեա արթուն բնութիւն՝ հերքեա զչարին ներգործութիւն. զի...

Ը. Եփդ լուսոյ անըստուերի՝ պաղատանօք կամք առաջի. որ փակեալ դրամբք յերեկոյին՝ երեւեցար մետասանին. ընդ Թովմայի առ քեզ գոչեմք՝ Տէր եւ Աստուած զքեզ դաւանեմք։ Է՛ջ եւ ա՛ռ մեզ յերեկոյիս՝ եւ տուր զողջոյն քո ի հոգիս։

Թ. Բամբեալքս զքէզ Տէր աղաչեմք՝ մեզ յօգնութիւն նայեա հայցեմք. պահապանդ Իսրայէլի՝ անձանց մերոց լե՛ր հովանի. օթեա՛ առ մեզ խաղաղարար զի ննջեսցուք անխռովաբար. եւ ընդ առաւօտս կանխեսցուք օրհնել զքեզ ընդ Հօր հոգւով։

Ժ. Գոչման փողոյն Գաբրիելի՝ որ ի վերջնումն գիշերի. լսել արա զմեզ արժանի՝ եւ յաջակողմն օդեաց դասի. անշէջ վառեալ զլոյս լապտերաց՝ ըստ իմաստուն հինգ կուսանաց. զի ընդ փեսայիդ ի յառագաստ հարսունք հոգւով մտցուք ի փառս։

ԺԱ. Հալածեա ի մէնջ Տէր նշանաւ խաչի քո զնդդիմամարտ եւ զաներեւոյթ գազանն. եւ մի տար յապականութիւն զքո ժառանգութիւնս։

ԺԲ. Բարեխոսեա վասն մեր Աստուածածին Մարիամ, որ ծնար զՏէր Աստուած՝ որ հովուէրն զԻսրայէլ, ամենազօր եւ աքանչելի փառօքն իւրովք։

# Ի ՔԷՆ ՀԱՅՑԵՄՔ

1.




2.




Որդի Աս - - տու - ծոյ՝. Ե-կեալ եմք ա-ռա-ջի քոյ յե-րե-կո-յիս աչ-խա-տեալք
եւ ծան - րա - բեռ-նեալք՝ թե-թե-ւա-ցո ի ծան-րու-թեանց մե-ղաց զան - ձինս՝
եւ զօ-րա-ցո բառ-նալ կա-մաւ ըզ-քաղ-ցրր լուծ քոյ պատ - - ուի -
րա - - նաց՝. աղաչանօք :
3. Պա-ղա-տի - - մք առ քեզ հոգ-ւով ի հան-գըս-տեան հաս-եալ ժա-մուս
մար-դա-սէր հո-գի Աս - տու - ծոյ. յոր-ժամ նո-րո-գես զե-րեսս երկ- րի,
եւ վե-րըս-տին ստա - նաս զո - գիս մարդ-կան՝. նո-րա-փե-տուր զար-դար-եա
ըզ-նըն-ջե-ցեալ-սըն մեր ըզ-ծըն-եալսն ի քէն սուրբ ա - ւա - զա - նաւն՝.


4.
Զկեն-դա-նա- գի - - - ր ա- նա-րատ ծը- նո-ղի քո ար-կա- նեմք
ա-ռա-ջի ա-նո-խա- կալ տէ-րու-թեա - նըդ քոյ՝. յոր-ժամ գաս փա-ռօք Հօր
դա-տել ըզ- թըշ- նա - մին խա - չի քո՝ նե - րեա յան-ցա - նաց
մե -րոց բա-րե-խօ -սու-թեամբ մօր քո եւ կու - սի. ա- ղա-չեմք ըզ-քեզ
Տէ - ր պահ-պա-նեա ըզ-մեզ ընդ հո-վա-նեա - - ւ խա - չի քո սուրբ:
5.
Հա-ղորդս ա-րա եւ ըզ- մեզ Տէր՝ ընդ սըր - բոց քոց ա -ռա -
քե - - լոցն. որք ար-ժա- նի ե-ղեն տե-սա-նել ըզ -քեզ ի յա - - րու - -
թեան քո. ար-ժա-նա-ւոր-եա Տէ - - ր տե-սա-նել ըզ - քեզ ի միւս- ան- գամ

## Ի քէն հայցեմք




6.




Ի քէն հայցեմք, հայր գթութեանց եւ Աստուած մխիթարութեանց, ի տխրական գիշերային մերձեալ ժամուս. մխիթարեա զմեզ ի տրտմութեանց մեղաց. եւ շնորհեա զուրախութիւն գործովք արդարութեան. աղաչանօք սուրբ Աստուածածնին՝ եւ ամենայն արդարոց: Ըստ քաղցրագոյն աստուածային քո հրամանի՝

կոչման Որդի Աստուծոյ· եկեալ եմք առաջի քո յերեկոյիս աշխատեալք եւ ծանրաբեռնեալք· Թեթեւացո ի ծանրութեանց մեղաց զանձինս· եւ զօրացո բառնալ կամաւ զքաղցր լուծ քոց պատուիրանաց· աղ...

Պաղատիմք առ քեզ հոգւով ի հանգստեան հասեալ ժամուս, մարդասէր Հոգի Աստուծոյ· յորժամ նորոգես զերեսս երկրի· եւ վերստին ստանաս զոգիս մարդկան· նորափետուր զարդարեա զննջեցեալսն մեր զծնեալսն ի քէն սուրբ աւազանաւն՝· աղ...

Զկենդանագիր անարատ ծնողի քո· արկանեմք առաջի անոխակալ տէրութեանդ քո· յորժամ գաս փառօք Հօր դատել զթշնամին խաչի քո, ներեա յանցանաց մերոց բարեխօսութեամբ մօր քո եւ կուսի· աղաչեմք զքեզ, Տէր, պահպանեա զմեզ ընդ հովանեաւ խաչի քո սուրբ։

Հաղորդս արա եւ զմեզ Տէր· ընդ սրբոց քոց առաքելոցն, որք արժանի եղեն տեսանել զքեզ ի յարութեան քո, արժանաւորեա, Տէր, տեսանել զքեզ ի միւս անգամ քո գալստեանն· օրհնութիւն առաքողին ի բարձունս։

Ի նստիլ քո յատենի դատաւոր ահեղ, աղաչանօք սուրբ Աստուածածնին, յիշեա զննջեցեալսն մեր· յորժամ գայցես անճառ փառօք· քանզի քո են փառք յաւիտեանս· ամէն։

# ՏԷՐ, ՈՂՈՐՄԵԱ

Մ. Եկմալեան




Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա
Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա։

Ամենասուրբ Երրորդութիւն
Տուր աշխարհիս խաղաղութիւն։

Եւ հիւանդաց բժշկութիւն
Ննջեցելոց արքայութիւն։

Արի Աստուած հարցն մերոց
Որ ապաւէնդ ես նեղելոց։

Հաս յօգնութիւն ծառայից քոց
Լեր օգնական ազգիս հայոց։

Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա
Յիսուս փրկիչ մեզ ողորմեա։

Ընկալ Տէր եւ ողորմեա։

# ՈՐ ՅԱՆԷԻՑ



Որ յա - նէ - - ից ստեղ- ծող գո - յից-արար-չա - կից -----
Հօր Բանդ Աս - տուած:Թո-ղու-թիւն շնոր-հեա ընդ - չե -ցե - լոց քոց
ծա - ռա - յից. յոր-ժամ գաս դա - տել զոր ա-նա-րատ - - - - - - -
ձե - - ռոք ստեղ - ծեր: Փառք Հօր -----եւ Որ-դւոյ եւ Հո -գւոյն ---
Սրբոյ այժմ եւ մի - - շտ եւ յա-ւի-տեանս յա-ւի տե- նից Ա- մէն:Որ ի ------
Նա - - չին ան - - ջըն- չա - ցար.զմահու լու-ծե - -ր զիշ -խա-նու - թիւն,
թո-ղութիւն շնոր-հեա ընդ - չե - ցե- լոց Քոց ծա- ռա - յից յոր-ժամ գաս
դա - տել զոր ա նա-րատ - - - - - - - ձե - - ռոք - - ստեղ ծե - - - -ր :

# Որ յանէից

Որ յանէից ստեղծող
գոյից. արարչակից Հօր
Բանդ Աստուած.
Թողութիւն շնորհեա
ննջեցելոց քոց ծառայից.
յորժամ գաս դատել զոր
անարատ ձեռօք ստեղծեր:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ
Հոգւոյն Սրբոյ: Այժմ եւ
միշտ, եւ յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

Որ ի Հօրէ առաքեցար.
եւ մարմնացար ի Սուրբ
կուսէն. Թողութիւն...:

Որ ի Խաչին
անշնչացար. զմահու լուծեր
զփշխանութիւն.
Թողութիւն...:

Որ պսակիչդ ես քոց
սրբոց. եւ անվախճան
բարեաց բաշխող.
Թողութիւն...:



Ռ. Իսրայելեան: Նահատակաց յուշարձան:
Սբ. Էջմիածին, 1965թ.:

# ԳԹԱ ՏԷՐ


Գը-թա Տէ---ր ի հո-գի--ս մեր Ննն-ջե---
ցե-------լոցն եւ յիշ-եա ո----ղո--ր մու----թեամբ.
քան-զի զի-նըք սու-րր ա--ր-եա--ն քո են.
ի յո---ր--ժա-----մ հրա-շա--լի--- ձա-յ-նի----ւ
փո------ղոյն յա-----ռ-նեն մե-ռ-եա-լքն, եւ կա-ն
ա--ռա-ջի ա-հա-ւոր քո բե--------մին:
Փառք Հօ---ր եւ Որդ--ւոյ եւ հոգ-ւոյն Սրբ---բոյ:

# Գթա Տէր


Այժմ եւ միշտ եւ յա - ւի - տեանս յա-ւի - տե-նից ա- - մէ - - - ն:
Զլու-սա-ւոր-եալ-քըս ծը-նըն -դեա-մբ Սուրբ ա - ւա - - - - զա - - - - նին.
մի բար-կու-թեա - - մբ խրա - - տեր եւ մի սըրտ-մըտ-ու-թեամ-բըդ քո - -
յա - - ն-դի - - - մա - - - - - ներ, ի յա - - - ւ- ժա - - - մ
երա - շա - - լի ձա - յ - նի - ւ փո - - - - - - - - ղոյն
յա - ռ-նեն մե -ռ - եա - լքն, եւ կա - ն ա - - - ռա - չի
ա - - հա - ւոր քո բե - - - - - - - մին :



Վ. Սուրէնեանց: Խաչելութիւն: 1900թ.:

Գթա՛ Տէ՛ր ի հոգիս
մեր ննջեցելոցն եւ
յիշեա ողորմութեամբ.
քանզի գինք սուրբ
արեան քո են. ի
յորժամ հրաշալի
ձայնիւ փողոյն յառնեն
մեռեալքն. եւ կան
առաջի ահաւոր քո
բեմին։

Փառք Հօր եւ Որդւոյ
եւ Հոգւոյն Սրբոյ։
Այժմ եւ միշտ, եւ
յաւիտեանս յաւիտենից.
ամէն։

Զլուսաւորեալքս
ծննդեամբ սուրբ
աւազանին. մի՛
բարկութեամբ
խրատեր. եւ մի՛
սրտմտութեամբդ քո
յանդիմաներ. ի յոր...։

# ՔԱՀԱՆԱՅՔ




*Քահանայք եւ ժողովուրդք հայցեմք ի քէն Տէր բարեգութ. ընդ ննջեցեալսն հաւատով ընկալ զմեզ նովին յուսով. յԵրուսաղէմ քաղաք վերին՝ յորժամ արդարքն ժողովին. փառս վերերգել միշտ ընդ նոսին՝ Երրորդութեանդ երրեակ անձին:*

# Ի ՎԵՐԻՆՆ ԵՐՈՒՍԱՂԷՄ




Ի վերինն Երուսաղէմ ի բնակարանս հրեշտակաց. ուր Ենովք եւ Եղիաս կան ծերացեալ. աղաւնակերպ, ի դրախտին Եդեմական՝ պայծառացեալ արժանապէս. ողորմած, Տէր, ողորմեա հոգւոցն մեր ննջեցելոց։







Կազմեց՝ Խաչիկ սարկաւագ Մարտիրոսեանը։

Շարուածքը եւ ձեւաւորումը՝
Պաւել Դալլաքեանի եւ Կարպիս Լուսարարեանի։



Արարատեան Հայրապետական թեմի համակարգիչ ծառայութիւն։
(MACINTOSH SE, Apple LaserWriter IINT)
Երեւան, 1991թ.։